ԳՐԱԿԱՆ ԵՒ ՏԵՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

(ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ)

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ (spyurkka@gmail.com)

ՄՈՒՏՔ

Գրողի նամականին յաճախ երեւան է գալիս ի լրումն նրա ստեղծագործական աշխարհի, օգնում հետազօտողին ճանաչել գիտական կենսագրութեան մանրամասները, ճշգրտումներ մտցնել առանձին հարցադրումների մէջ, հասկանալ ներաշխարհը, նկարագիրը: Սա այսպէս է առաջին հերթին ամենայն հայոց բանաստեղծի պարագային: Բաւական է նշել առաջին հայեացքից թեքնիք թուացող մի փաստ. Յովհաննէս Թումանեանի նամականին երկու ակադեմիական հատոր է կազմում (1478 էջ):

Իրաւացի է թումանեանագէտ Լուսիկ Կարապետեանը, երբ նկատում է. «*Բոլոր առումներով նամակները Ամենայն հայոց բանաստեղծի գրական վաստակի ուղղակի շարունակութիւնն ու լրացումն են*»[1]: Միաժամանակ ընդգծենք, որ Թումանեանն այստեղ եզակի չէ. սա օրինաչափութիւն կարելի է դիտել նաեւ հայր Ղեւոնդ Ալիշանի, Վահան Տէրեանի, Եղիշէ Չարենցի, Երուանդ Օտեանի, Զապէլ Եսայեանի, Արշակ Չօպանեանի, Վահան Թէքէեանի, Աւետիք Իսահակեանի, Շահան Շահնուրի եւ այլոց պարագային, որոնցից շատերի նամակներին գրականագիտութիւնը պատշաճ ուշադրութիւն է դարձրել՝ դրանք հրապարակ հանելով նաեւ առանձին գրքերով[2]:

Թումանեանի նամականուն առանձին հարցադրումների առիթով դիմել են շատ ուսումնասիրողներ, ինչպէս Լեւոն Հախվերդեանը («Թումանեանի աշխարհը», 1966), Արամ Ինճիկեանը («Յովհաննէս Թումանեան. կեանքի եւ ստեղծագործութեան պատմութիւնը. 1869-1899», 1969), Մկրտիչ Մկըրեանը («Յովհաննէս Թումանեանի ստեղծագործութիւնը», 1981), Էդուարդ Ջրբաշեանը («Թումանեանի պոէմները», 1986), Ազատ Եղիազարեանը («Թումանեանի պօէտիկան եւ նրա ժողովրդական ակունքները», 1990),

---

[1] Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր իններորդ (նամակներ 1885-1904)*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1997, էջ 475: Այսուհետեւ մէջբերումները կը տրուեն փակագծերի մէջ:

[2] Բոլորվին վերջերս, 2020-21ին Երեւանում Մխիթարեան միաբան հայր Վահան Ծ. Վ. Օհանեանի աշխատասիրութեամբ լոյս է տեսել հայր Ղեւոնդ Ալիշանի եռահատոր ստուարածաւալ նամականին (2000 էջից աւելի): Տե՛ս նաեւ՝ *Երուանդ Օտեան, Նամակներ*, ԳԱԹ հրատ., Երեւան, 1999. նաեւ՝ Զապէլ Եսայեան, *Նամակներ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1977. նաեւ՝ Արշակ Չօպանեան, *Նամականի*, «Սովետական գրող», Երեւան, 1980. նաեւ՝ Վահան Թէքէեան, *Նամականի*, հրատ. «Թէքէեան» Մշակութային Միութեան, Լոս Անճելըս, 1983. նաեւ՝ «*Աւետիք Իսահակեանի նամակները*», ԵՊՀ հրատ., Երեւան, 2015. նաեւ՝ Շահան Շահնուր, *Նամականի, հտր. 1-3*, Մայրենի հրատ., Ուոթըրթաուն, Մեսեչուսէց, 2001-06:

Հրանդ Թամրազեանը («Յովհաննէս Թումանեան. բանաստեղծը եւ մտածողը», 1995), Սուսաննա Յովհաննիսեանը («Յովհաննէս Թումանեանի կեանքի եւ ստեղծագործութեան պատմութիւնը») եւ ուրիշներ: Սակայն զուտ նամակագրական ժառանգութեան վրայ հիմնուած ամբողջական քննութիւն, յամենայն դէպս, մեզ յայտնի չէ: Մինչդեռ այդպիսի աշխատանքը օգնում է մէկ տողով տեսնել հեղինակի գրական-տեսաբանական հայեացքի ամբողջութիւնը, նրա նախասիրութիւնների շրջանակը, ստեղծագործական կարգի հարցադրումներ, որոնք, սակայն, դժուար, անհնար է պարփակել մէկ յօդուածի շրջանակում: Օրինակ՝ առանձին ուսումնասիրութեան նիւթ կարող են դառնալ Թումանեանի նամակագրութեան մէջ ծաւալուած բանավէճերը, իրեն յղուած նամակները, այլ գրողների նամակներում տրուող գնահատութիւնները, Թումանեանի նամակների զուտ բանասիրական քննութիւնը եւն., ուստի մեր այս յօդուածն աւելի շատ խոստումուրուագծում է:

Սոյն յօդուածում անդրադարձել ենք գրողի այն դատողութիւններին, որոնք նամակներում յաճախադէպ են, այսինքն՝ մեր հայեցողութեամբ կրում են համակարգային բնոյթ: Աշխատանքն աւելի համակարգուած ներկայացնելու համար թումանեանական հարցադրումները բերել ենք թեմատիկ-գաղափարական բաժանումներով.

ա) ***Հեղինակի գրքերի ծննդոցը***, որը ձգւում է *Բանաստեղծութիւնների*ի առաջին մոսկովեան ժողովածուից (1890) մինչեւ վերջին՝ պոլսական գիրքը (1922), որտեղ երեւան է գալիս Թումանեանի բծախնդիր վերաբերմունքը, առանձին դէպքերում՝ անբաւարարութիւնը հրատարակութիւններից, ինչպէս օրինակ մոսկովեան երկրորդ հատորի (1892) պարագայում. «*Վերջապէս ստացայ գրքիս առաջին երկու օրինակները* ***այսքան սպասելուց յետոյ****. [բայց այնքան վատ, եւ անախորժ եղաւ տպաւորութիւնը, որ երանի չէի ստացել:* ***Բացատրեմ****]*. արտաքինը այլանդակ է ուղղակի, գիրքը այնքան կարճացրել էք կտրելով, որ քիչ է մնացել հասնէք տողերին. կարմիր թանաքով տպել էք կարմիր թղթի վրայ Բանաստեղծութիւն<ներ>, բարակ տառերով, թողնելով բառը առանց մի շրջապատող ծաղկանկարի» (*հտր. 9*, էջ 112): «Ներքին մասի» վերաբերեալ մատնացոյց է անում նաեւ աններելիօրէն առատ տառասխալները: Թումանեանի դժգոհութիւնը առաւել հասկանալի է դառնում այն պարագայում, երբ նկատի ենք առնում հեղինակի հաւաստումը, թէ «*գիրքը գրող է ստեղծում*» (*հտր. 9*, էջ 317):

Նոյն ուշադիր վերաբերմունքն ենք նկատում նաեւ պոլսական ժողովածուի նախնական տարբերակի առիթով Պօղոս Մակինցեանին ուղղած նամակում. «*Պոլիս տպագրութեան էի յանձնել բանաստեղծութիւններիս մի ժողովածու: Ստացել եմ դեռ չկազմած մի օրինակը լիքը տպագրական սխալներով, մի շատ անբարեխիղճ կամ անվարձ սրբագրչի ձեռքի տակից անցած մի գործ: Գրում եմ, որ ինչ որ կարելի է ուղղել՝ ուղղեն:*

Տեսնենք ինչ դուրս կը գայ»[3]:

Իսկ թէ ինչ է դուրս եկել ամէն պարագայի Թումանեանի կենդանութեան օրօք ամէնից համապարփակ այս հրատարակութիւնից, կապուած բանաստեղծի հիւանդութեան եւ այդ ուղղումների՝ պոլսական հրատարակիչներին հասանելիութեան հետ, մնում է ենթադրութիւնների սահմանում[4]:

բ) ***Գեղարուեստական երկերի ստեղծագործական պատմութեան ուրուագծում***: Իր մանկութեան ընկեր, գիւղագիր Անուշաւան Աբովեանին 1890ի Մայիսի 8ին գրած նամակում իր տրամադրութիւնը փոխանցելու համար բերում է հետեւեալ բանաստեղծական հատուածը (իդէպ, այսօրինակ բանաստեղծական մէջբերումները Թումանեանի նամակներում յաճախադէպ են).

Փայլուն աստղիկ երկնագիտակ,
Դուն, որ տեսնում ես ամէն բան,
Սառն հիւսիսի երկնքի տակ
Ունիմ ընկեր, տեսնո՞ւմ ես նրան…
Նա էլ ինձ պէս
Նայո՞ւմ է քեզ… (հտր. 9, էջ 15):

Ծանօթագրութեան մէջ իրաւացիօրէն նշւում է, որ տրամադրութիւնը համահունչ է միքանի օր յետոյ գրուած «Գիշերային առաջին աստղի դիմաց» բանաստեղծութեանը (*հտր. 9*, էջ 481)՝ յատկապէս նկատի ունենալով նամակում բերուած հատուածի առաջին տողի հետ նմանութիւնը.

Արեւը թռաւ. երկինք ու երկիր
Առաւ խաւարը գիրկն համատարած.
Դուն, փայլուն աստղիկ, դարձեալ շողացիր
Արդեօք այս գիշեր ի՞նչ բերիր մարդկանց[5]:

Այս բանաստեղծական փոքրիկ կտորը մեզ յուշում է Թումանեանի ստեղծագործական յատկանիշերից մէկը եւս՝ նիւթը երկարատեւ, նոյնիսկ տասնամեակներով մշակելու նախասիրութիւնը: Եթէ ուշադիր լինենք, պատկերը մեզ կը տանի շատ աւելի ուշ, կեանքի մայրամուտին գրուած «Սիրիուսի հրաժեշտը» (1922) յայտնի քերթուածին.

Ի՞նչքան աչք են վըրադ յառել,
Նայում են քեզ
Հիմի մեզ պէս,
Ի՞նչքան աչք է նայել, մարել,
Եւ կամ ի՞նչքան
Դեռ պիտի գան,
Որ **անյայտից** կեանք չեն առել[6]:

Իհա՛րկէ, եթէ նայելու լինենք նամակից մինչեւ վերջին քերթուածն ընկած պատկերակառուցումին, տեսանելի կը լինի, որ մի դէպքում գործ ունենք զուտ մտայղացման հետ, այն էլ՝ անձնական շարժառիթից եկող, միւս դէպքում՝ առանձին բանաստեղծութեան, որը ուղղւում է «մարդկանց»: Իսկ արդէն վերջին՝ «Սիրիուսի հրաժեշտը» քերթուածում գործողութիւնը դառ-

---

[3] Նոյն, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր տասներորդ (նամակներ. 1905-1922)*, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1999, էջ 420:

[4] Նոյն, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր առաջին (բանաստեղծութիւններ)*, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, 2018, էջ 11-12:

[5] Նոյն, էջ 64:

[6] Նոյն, էջ 330:

նում է ետընթաց. այդ սերունդնե՛րն են նայում պայծառ աստղին: Աւելին՝ ասելիքը ստանում է փիլիսոփայական շեշտադրութիւն՝ բերելով թումանեանական գեղագիտութեանն այնքան բնորոշ «անյայտ»ի խաղարկումը[7], յաւերժութեան այնպիսի խորհրդով, ինչպիսին բացուել է Իսահակեանի «Ռաւեննայում» յայտնի քերթուածում:

Նամակներում յաճախ ենք հանդիպում ձեւակերպումների եւ մտքերի, որոնք յետագայում գրեթէ բառացի կամ բառացիօրէն տեղ են գտնում գեղարուեստական խօսքում, գրական փոխանցումների հետ կապուած մի երեւոյթ, որ Ի. դարի երկրորդ կէսին ստացաւ միջտեքստայնութիւն բնորոշումը[8]: Յաճախ այդ մտքերը նամակներում եւ գեղարուեստական խօսքում հանդիպում են ժամանակային հեռաւորութեան վրայ, ինչը փաստում է, որ նամակներում, այսպէս ասած մտերմական զրոյցներում, դրանք աւելի շատ խմորումի մէջ են եւ միայն յետագայում պիտի գեղարուեստական ձեւի տակ մտնեն, ինչպէս օրինակ 1900ին բարեկամին՝ հասարակական գործիչ, հրատարակիչ Փիլիպոս Վարդազարեանին ուղղուած նամակի «*Եւ ապարդիւն ու անպտուղ կ'անցնեն իմ օրերն, ինչպէս անցնում են արդէն*» դատողութիւնը՝ որպէս ներկայի ու ապագայի կանխազգացում, եւ արդէն 1921ին գրուած յայտնի քառեակում երեւոյթի արձանագրումը իբրեւ իրողութիւն, իհա՛րկէ, գեղարուեստօրէն աւելի խտացուած.

Կեանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամէնքի.
Խափան, խոպան ու անպըտուղ, անցաւ առանց արդիւնքի[9]:

գ) ***Տեսաբանական հարցադրումներ***: Սրանք հանդէս են գալիս միքանի ուղղութիւններով՝ ձեւի ու բովանդակութեան, գրական սեռերի, նախասիրութիւնների, երբեմն էլ՝ առանձին հասկացութիւնների մեկնութիւններ:

Ձեւի եւ բովանդակութեան այդքան չարչրկուած ու բանավէճերի առիթ տուած թնճուկը Թումանեանը լուծում է Շեքսպիրի ստեղծագործութեան գնահատման ճանապարհով. «*Ասելս այն է, որ դու* (խօսքը Վարդազարեա-

---

[7] Իդէպ, այս բանաստեղծութեան գրութեան շարժառիթի մասին կ'ուզենայինք բերել մէկ նկատառում. թէ՛ հատորի ակադեմիական առաջին (1988, էջ 641), թէ՛ նոր (2018, էջ 717) հրատարակութիւններում նշւում է, որ ազդակը գալիս է տասնչորսամեայ Վիկտոր Համբարձումեանի հետ հանդիպումից (1922ի ամառ): Մեր կարծիքով, սակայն - եւ բերուած օրինակներն էլ այդ են փաստում - նիւթը Թումանեանին հետաքրքրել է շատ վաղուց:

[8] Julia Kristeva, *Desire in Language: A Semiotic Approach to Literature and Art*, Columbia University Press, New York, 1980, էջ 36:

[9] Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր երկրորդ (քառեակներ, բալլադներ, թարգմանութիւններ)*, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, 2018, էջ 59:
Պիտի արձանագրել, որ նմանօրինակ դատողութիւնները աւելի են ուժգնանում 1909ին եւ դրանից յետոյ. սա մի տեսակ բանաստեղծի աշխարհում վերաճում է կայուն անբաւարարութեան (*հտր. 10*, էջ 85, 90):

նի մասին է – Ք.Ա.) *զուր ես ասում, թէ այս կամ այն միտքը յայտնած է արդէն: …Ո՞ր բանաստեղծն է մի նոր միտք յայտնել: Ես, որ աստուածացնում եմ Շեքսպիրին, իսկի չեմ էլ մտածում, թէ նա ինչ միտք է յայտնել, դրա վրայ չեմ հիանում, այլ թէ ինչպէս է յայտնել»* (*հտր. 9*, էջ 233)՝ եզրակացնում է տեսաբանական ուժով՝ խնդիրը լուծելով ասելիքի ձեւի օգտին, հաւաստելով, որ բովանդակութիւնը միշտ նոյնն է: Եւ ամենակարեւորը, որ հնչում է հանգանակի նման. «*Այս է մրցութեան դաշտը – մտքերը, որ արդէն կան (եւ անկարելի էր, որ չլինէին առաջուց) առնել, կենդանագործել ու (աւելի պարզ, բայց շքեղ) պատկերացնել, ներկայացնել հասարակութեանը*» (*հտր. 9*, էջ 237-38):

Այս տեսանկիւնից հետաքրքրական է դատողութիւնը իր ստեղծագործական երազանքի՝ *Հազարան բլբուլ*ի առումով, մի բան, որ կարմիր թէլի պէս անցնում է նրա նամակագրութեան միջով: Միայն նիւթի շուրջ նրա ձեւակերպումներն ընթերցողի համար բաւական են չափելու այն գորովը, որ տածում էր այս թեմայի հանդէպ, ինչպէս օրինակ՝ «*ման եմ գալիս իմ հեքիաթը*» (*հտր. 9*, էջ 204): Նրան անգամ չէր վախեցնում այն, որ նիւթը զուտ տեղական նշանակութիւն կամ ծագում չունի: Այս մասին ինքնատիպ բացատրութիւն է տալիս. «…Ես մի (իսկապէս երկու հեքիաթ միացրած) հեքիաթ «Հազարան բիւլբիւլը» եւ «*Սինամ թագաւորի գաղտնիքը» նիւթ առած ուզում եմ յօրինել մի արեւելեան պոէմա: Դրանով հետաքրքրուելով գտայ, որ շատ անգամ տպուած է, բոլոր ազգերն ունեն, պատմուած է հազար ու մի ձեւով… բայց այդ բոլորից յետոյ ես ոչ միայն չթողի իմ հեքիաթը, այլ աւելի պինդ բռնեցի, աւելի ոգեւորուեցի այդ նիւթով. ով ինչպէս ուզում է գրած լինի, ես էլ* ***ինձպէս*** *եմ ասելու*» (*հտր. 9*, էջ 238, ընգծումը մերն է - Ք.Ա.):

Ուշագրաւ է նաեւ մէկ այլ ոլորտի՝ ժանրին տրուած բնորոշումը, հենց նոյն *Հազարան բլբուլ*ի օրինակով. նա խորհուրդ է տալիս խուսափել հեքիաթին տրուած պարզունակ դերակատարութիւնից, քանի որ «*դա գրականութեան մէջ ամենաբարձր արտայայտութիւնն է, ուր ամբողջը յաւիտենական սիմվոլներ են*» (*հտր. 10*, էջ 424): Սա ժանրատեսակի ընդլայնումի միտում էր, որ իր ծաւալումները պիտի ստանար Յակոբ Օշականի դատողութիւններում եւ ստեղծագործութեան մէջ[10]:

---

[10] «*Հեքիաթները դարաւոր փորձառութեանց հանգանակներ են: Երբեմն, անոնք խլեակի մը ձեւին տակ մեծ, հեռաւոր, ա՛լ մոռցուած համարուող նաւաբեկութեանց չարաշուք, բայց սթափեցնող յիշատակը կը պտտցնեն սերնդէ սերունդ: …Ժողովուրդի մը երեւակայութիւնը, հոգեկան աշխարհը իր խորագոյն ալքերուն մէջ վրդովող այդ դրուագները դարերով կը դիմանան, նոյնիսկ իրենց ստուերներովը, որոնք կերպով մը կախուած կը մնան արդէն անոր ճակատագրի ճամբաներուն: Ու սերունդները միշտ ջնջելիք կամ աւելցնելիք բաներ կ'ունենան նախնական տեսիլքներուն վրայով*» (Յակոբ Օշական, *Համապատկեր արեւմտահայ գրականութեան, եօթներորդ հատոր (Արուեստագէտ սերունդ)*, Անթիլիաս, 1979, էջ 258-59):

Նիւթին անմիջապէս կապւում է մանկական գրականութեան խնդիրներին անդրադարձը, որը վերաբերում է բանաստեղծի շատ աւելի հասուն տարիքին եւ եւս մէկ անգամ գալիս է հաստատելու, որ մանկական գրականութիւնը դժուարին տարածք է, գրականութեան մի ոլորտ, «*որ աւելի հաճոյքով կ'անեմ*»՝ խոստովանում է բանաստեղծը (*հտր. 10*, էջ 104), մանաւանդ «մանկական գրականութեան սովի» պայմաններում: Պատահական չէ, որ մանկական, այդ թւում՝ եւ հայրենագիտական բնոյթի խաղեր է կազմել (*հտր. 10*, էջ 222):

Հեղինակն այս առթիւ կարեւոր զգուշացում ունի. չպէտք է ելնել այն հանգամանքից, թէ «*հենց անունը հեքիաթ է, վերջացաւ: Գրիմմի անունն էլ վրէն: Կարծում են հեշտ բան է հէքեաթ մշակելը: Գրիմմները հազիւ մի քանի հեքիաթ ունեն մշակուած: Մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, աղաւաղած ու փչացրած*» (*հտր. 10*, էջ 423-24):

Այս վերաբերմունքի ուղղակի շարունակութիւնը կարող ենք նկատել նաեւ դատողութիւնը, որ բերում է Ռուբէն Դրամբեանի յարձակումին ի պատասխան գրուած «Ոչ-գրական ոչնչութիւնները քննադատ» յօդուածում, թէ «*Դուք* (իմա՝ Դրամբեանը – Ք.Ա.) *էնքան տգէտ էք, չէք էլ իմանում, որ հեքիաթները գրական մարդիկ չեն յօրինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եւ շնորհքը հենց էդ պատմելու մէջն է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզուով, ինչ ոճով ու ինչպէս պատմեն, որ ե՛ւ գեղեցիկ դուրս գայ, ե՛ւ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի*»[11]:

Իսկ որպէսզի գրողը պատկերացում կազմի ժողովրդական աւանդոյթների ու պատումների մասին, մի բան, որ իրեն յաճախ չէր յաջողւում, պէտք է «*գրողը կարողանայ ճանապարհորդել, ուսումնասիրել իր ժողովուրդն, ուսումնասիրել նրա աւանդութիւնները, լեզուն, ադաթները: Սաստիկ զգում եմ այս կարիքը ամէն անգամ, երբ լինում եմ ժողովրդի մէջ – ծո՛վ է, ծո՛վ*» (*հտր. 9*, էջ 264):

Վերոնշեալ մէջբերումները խօսում են այն ընդհանրական մօտեցման մասին, որ որդեգրում է հեղինակը թէ՛ հրապարակային խօսքում, թէ՛ մտերմիկ հաղորդակցութիւններում:

Եթէ խօսելու լինենք առհասարակ ժանրային հարցադրումների մասին, պիտի նկատել, որ առաջին հայեացքից թւում է, որ Թումանեանը առանձին նախապատուութիւններ չունի: Յամենայն դէպս, ծաւալուն ժանրերին իր քիչ հակուածութիւնը նա բացատրում է հասարակական գործօնից ելնելով. «*Բանաստեղծը միայն խաղաղութեան մէջ կարող է ամփոփուել, ոգեւորուել ու ստեղծագործել - մանաւանդ մեծ գործեր, օրինակ պոէմ, դրամա եւ այլն: Ես այսքան բան որ ունեմ կիսատ-պռատ ընկած՝ նրանից հո չի,* [որ] *ուժս*

[11] Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր վեցերորդ* (Քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1887-1912), ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1994, էջ 161:

չի պատել, այլ նրանից, որ խանգարուել եմ: …Խանգարել որ ասում եմ, ես դժուարութիւնը չեմ հասկանում, …ես այն արգելքներն եմ ասում, որ մարդու հնարաւորութիւն չեն տալիս, չեն թողնում պարապի, ուշքն իրան հաւաքի…» (*հտր. 9*, էջ 203): Հաւատա՞նք բանաստեղծի՝ ի՛ր իսկ ստեղծագործութեանը տրուած խիստ գնահատականին. թերեւս վերապահումով: Եւ սա հաստատելու համար բաւական է միայն սեւեռուն միտքը, որ ստեղծագործական կեանքի սկզբից ուղեկցել է իրեն, այն է՝ դրամատուրգիային հակումը. «*…Ուզում էի դրամա գրող դառնալ…*» (*հտր. 9*, էջ 229), ինչի փորձերը հեղինակային վկայութիւններում կան[12]:

Թումանեանի ստեղծագործութեան մէջ կարելի է առանձնացնել նրա գեղագիտական համակարգը բնորոշող առանձին բանալի բառեր, որոնցից առնուազն երեքը՝ **Վերը, Անյայտը, Հեռուն**, հեղինակային մեկնութիւնների առիթ են տուել. բանաստեղծը մէկ տողով է բացատրել առանձին ստեղծագործութիւններում ցրուած այս երեք դասակարգումները՝

«*…**Անյայտը**, որ պէտք է ունենայ ոգեւորուած գրողը, դեռ խաւար է, մութն է ինձ համար, ու… թափառում է իմ հոգին* (յիշենք թէկուզ «Հայրենիքիս հետ» քերթուածի սկզբնամասը – Ք.Ա.):

Այդ անյայտը, կամ աւելի ճիշդ՝ իմ անյայտը, գուցէ հենց այն «Վերն է», որ ես մեծապառով յիշատակել եմ «Ընկերիս» ոտանաւորի մէջ…: Բայց հենց դա էլ շատ է անորոշ, կամ ինչպէս ոտանաւորն ինքն է ասում.

Բայց, ա՜խ, նա այնքան, այնքա՜ն է հեռու…

*Այդ **հեռու**-ին հասնելը կամ այդ խաւարը պարզելը հնարաւոր է, ի հա՛րկէ, միայն զարգացումով, այնպիսի զարգացումով, որ ես երբեք ունենալու չեմ եւ միշտ **թափառելու է իմ հոգին**»* (ընդգծումները հեղինակինն են – Ք.Ա., *հտր. 9*, էջ 439):

Նկատենք, որ յետագայ գեղարուեստական բնագրերում այս հասկացութիւնները շատ աւելի բազմաբովանդակ են, քան նկատառումներն են նամակներում:

դ) ***Ժողովրդական բանահիւսութեան, գրական դէմքերի եւ գրապատմական երեւոյթների գնահատութիւններ***: Թումանեանի դատողութիւնների մէջ առանձին մեծ բաժին են կազմում ժողովրդական բանահիւսութեան հետ աղերսներն ու դրա իմաստաւորման փորձը: Իդէպ, սա հեղինակը կատարել է առնուազն երեք ճանապարհով՝ զուտ գեղարուեստական անդրադարձներում (յիշենք թէկուզ լեգենդներն ու բալլադները, ինչպէս

---

[12] Թիֆլիսի նահանգային ժանդոստիկանական վարչութեանն ուղղած դիմումի մէջ Թումանեանը յայտնում է, որ «*Յունուարի 19-ի բնակարանիս խուզարկութեան ժամանակ ժանդարմական վարչութեան գրաւոր կարգադրութեամբ բռնագրաւուել են իմ ձեռագրերը: Նոյն ամսի 27-ին ես եւ ստացայ ձեռագրերի պարկը, որից երկու փաթեթը իմս չէին…, իսկ իմ ձեռագրերից պակասում էին մի քանի անտիպ, անաւարտ պոէմներ, հեքիաթներ եւ մի դրամա, **որոնք շատ թանկ են ինձ համար***» (*հտր. 10*, էջ 517, ընդգծումը մերն է – Ք.Ա.):

«Լուսաւորչի կանթեղը», «Փարանա»ն, «Աղաւնու վանքը», «Աղթամար»ը, «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպի համանուն ճիւղի մշակումը), յօդուածներում («Ղազարոս Աղայեանի *Անահիտ*ը» եւ ուրիշներ) եւ նամակներում, որոնցում պարզաբանւում են այն շեշտադրումները, որոնցով պայմանաւորւում է ազգային գրականութեան ծագումնաբանութիւնն ու ինքնուրոյնութիւնը (*հտր. 9*, էջ 212):

Բնութագրական է Տիգրան Չիթունու «Արեւելեան խաղաշխարհ»[13] աշխատութեան առանձնացնումը. «*Սակայն աչքի առաջ ունենալով նիւթի կարեւորութիւնն ու հաւաքողի, գրի առնողի հմտութիւնը, որպէս ընկերութեան անդամ (խօսքը Կովկասի հայոց հրատարակչական ընկերութեան մասին է – Ք.Ա.), հայոց գրականութեամբ պարապող մէկը՝ կը ցանկանայի տպագրուած տեսնել պ. Չիթունու ինչպէս յիշեալ աշխատութիւնը, այնպէս էլ նրա միւս աշխատութիւնները՝ «Սասմանց տուն», «Հերան-Թուրան», «Վանի նահանգ», «Հեքիաթներ», «Բուսաբանութիւն» (հայկական), «Բառարան Վասպուրականի բարբառի» եւ այլն*» (*հտր. 10*, էջ 167-68): Նոյն գնահատանքով է նա արտայայտւում նաեւ Սահակ Ամատունու *Բառ ու բան*[14] աշխատութեան մասին (*հտր. 10*, էջ 169):

Թումանեանի գնահատականները հասնում են մինչեւ «*Նարեկն ու Խորենացին, մեր հոգեբուխ շարականներն ու մեղեդիները*» (*հտր. 9*, էջ 290), մինչեւ Մխիթարեաններ, որոնց առաքելութիւնը տեսնում էր հայրենիքը պատմելու եւ մայրենի լեզուով եւրոպական արժէքները մեզ առաջինը ծանօթացնելու մէջ (*հտր. 9*, էջ 279): Նա յայտնի է իր «*նախորդ շրջանի բանաստեղծներին*», առանձին հեղինակներին տրուած բնորոշումներով (Խաչատուր Աբովեան, Աղայեան, Ռափայէլ Պատկանեան, Լեւոն Շանթ եւ շատ ուրիշներ), որոնք առաջին հերթին երեւան են գալիս ծրագրային յօդուածներում, ելոյթներում, ապա ոչ-երկրորդական հանգամանք ստանում նամակներում:

Այս առթիւ նշանակալի է 1907ի Յունիսի 10ին Թիֆլիսում կարդացած «Կեանք եւ գրականութիւն» դասախօսութեան մէջ Ռ. Պատկանեանին տրուած գնահատականը, ուր նրան անուանելով «հայոց ազգային երգիչ» եւ վկայաբերելով «Իմ երգը» եւ «Շինականի երեկոյեան երգը» բանաստեղծութիւններից հատուածներ, որսալով որոշակի արհեստականութիւն այս կարգի գործերում, այնուամենայնիւ, գտնում է. «*Ուրիշ բան է, երբ Գամառ-Քաթիպան իր ռազմական երգերն է երգում, այստեղ է երեւան գալիս նրա ամբողջ ուժը, եւ վիթխարի հսկայի նման ծառանում մեր առաջ*»[15]:

---

[13] Տե՛ս՝ *Արեւելեան խաղաշխարհ: Տոհմիկ խաղեր եւ ժամանցներ, Ա. հատոր*, Կ. Պոլիս, 1919. նաեւ՝ *Հայկական խաղեր եւ ժամանցներ կամ Արեւելեան խաղաշխարհ, Բ. հատոր*, Կ. Պոլիս, 1919:

[14] Տե՛ս՝ *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912:

[15] Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր վեցերորդ*, էջ 532-33:

Իսկ արդէն նամակագրութեան մէջ նշանակալի է Նոր Նախիջեւանում Պատկանեանի արձանի կանգնեցման առթիւ աւելի վաղ՝ 1901ին, յղած գրութիւնը, ուր տեղ են գտել վերոնշեալ «Իմ երգը» բանաստեղծութեան քառատողի իր փոփոխած տարբերակը եւ հաւաստումը, որ «*Մենք, ժամանակակիցներս գիտակից ենք բանաստեղծի մեծութեանը…*» (*հտր. 9*, էջ 283-84): Միաժամանակ ընդգծենք, որ շատ աւելի ուշ գրում է, որ մոռացութեան է տուել այս կտորը եւ հակասելով ինքն իրեն՝ գտնում է, որ շատ աւելի հակուած է այն մտքին, որ «*նա* (իմա՝ Պատկանեանը - Ք.Ա.) *էն չի, ինչ որ կարծում են, այսինքն՝* ***հայոց ազգային մեծ բանաստեղծը*** *չի*», միաժամանակ վերջնական գնահատականի պայման համարելով «*օբյեկտիւ ու յարգալից վերաբերմունքը, կիրթ, գեղարուեստական ճաշակն ու առողջ գրական հասկացողութիւնը*» (*հտր. 10*, էջ 249-50, ընդգծումը մերն է – Ք.Ա.):

Գրականութեանն ու գրողների մասին այս դրուագային դատողութիւնների կողքին Թումանեանը պահանջ էր դնում նաեւ գրականութեան պատմութիւն ունենալու եւ այդ ուղղութեամբ գնահատելի է համարում Լէոյի *Հայ նոր գրականութեան պատմութիւն*[16] փորձը՝ անկախ հեղինակի հանդէպ իր վերապահումներից (*հտր. 10*, էջ 216):

Ե) Պակաս կարեւոր չեն ***ինքնագնահատութիւնները***, որոնք աչքի են ընկնում սթափ մօտեցումներով, երբեմն ստեղծագործական ընթացքի ամբողջական ուրուագծումներով, ինչպէս *Լոռեցի Սաքօն* պոէմի պատմութիւնը: Նկատելի է այս կարգի դատողութիւններում նաեւ այլ հեղինակների գնահատականների հետ փոխներթափանցուածութիւնը: Այսպէս, Աղայեանի վրայ պոէմի թողած ազդեցութիւնը առիթ է գնահատելու նաեւ հենց Աղայեանին: Անգամ մէկ պարբերութեան տիրոյթում կողք կողքի երեւում են երկուսն էլ. «*Աղայեանցը նոյնիսկ առաջին տողերից շատ բծախնդիր լինելով, ես ստիպուեցայ պահպանողական դիրք բռնել. միմեանց չզիջանք. այնպէս որ բանը վիճաբանութեան փոխուեց (բայց, ի հա՛րկէ, մեղմ): Այս մարդու յատկանիշն է միշտ նախապաշարուած վերաբերուել դէպի ուրիշները: Դեռ կէսը չհասած մի գոռգոռոց սարքեց, թէ բոլորովին հոգեբանութեանը հակառակ է Սաքոյին խելագարեցնելը: Ես հակառակն ապացուցեցի…*» (*հտր. 9*, էջ 23):

Բաւական տպաւորիչ է առաջին *Բանաստեղծութիւններ* ժողովածուի շուրջ ստեղծուած մթնոլորտի հեղինակային իմաստաւորում-բնութագրութիւնը Ա. Աբովեանին ուղղած 1890ի Նոյեմբերի 29 թուակիր նամակում, թէ՝ «*Ահա ընդհանուր կարծիքն իմ գրքիս մասին, կան մարդիկ, որ ասում են, թէ բոլորը լաւն է, սրանք սուտ են ասում կամ չեն կարողանում ջոկել, կան մարդիկ, որ պոէմաներն են շատ գովում, կան՝ որոնք փոքրիկ ոտանաւորները*» (*հտր. 9*, էջ 54), եւ անմիջապէս վերադարձը *Լոռեցի Սաքօ*ին. «*Բայց*

[16] Հաւանաբար նկատի ունի «*Ռուսահայոց գրականութիւնն սկզբից մինչեւ մեր օրերը*» աշխատութիւնը (Վենետիկ, 1904):

*մի շատ յամառ կարծիք կայ (սրանց թիւը մեծ է, եւ առ հասարակ լուսաւորուածներն են) «Լոռեցի Սաքոյի» մասին, թէ նա լինելով առողջ եւ աներկիւղ «**իգիթ**» չէր կարող վախենալ քաջքերից եւ **խելագարուել**: Ես թէեւ շատ պակասութիւն եմ խոստովանում իմ գրքում, բայց այս կարծիքին ես հաւան չեմ»* (*հտր. 9*, էջ 54-55): Սա միքանի կողմից է մեր առջեւ բացում Թումանեանի կերպարը. առաջին հերթին երեւում է «ինքնադատութեան փորձ»ը, ինչպէս կ'ասէր Միսաք Մեծարենցը, եւ երկրորդ, ընթերցողի հանդէպ բացարձակ յարգալից վերաբերմունքը եւ նոյն անաչառութեան ակնկալիքը:

զ) ***Գրական ազդեցութիւններ***: Այս տեսանկիւնից բնութագրական է Եուրի Վեսելովսկուն եւ Լէոյին ուղղած նամակների բովանդակութիւնը, որոնցում հետաքրքրականը ոչ միայն հեղինակային խոստովանութիւններն են, այլեւ այն տարածութիւնը, որի վրայ ծաւալւում են իր գրական դասերի արմատները. «*Ռուս բանաստեղծներից ամէնից շատ ինձ վրայ ազդել է Լերմոնտովը, ապա՝ Պուշկինը, եւ, [այժմ] ես կարծում եմ, նրանց ազդեցութիւնն է եղել երեւի, որ գրել եմ ես այն պոէմաները, ուր երգուած են մեր լեռնական ժողովրդի կեանքը, սովորութիւններն ու բնութիւնը*» (*հտր. 9*, էջ 344-45): Այդ ազդեցութիւնը նաեւ պայմանաւորում է նոյն գրողներից արած իր թարգմանութիւններով, որոնք նոյնպէս չէին կարող բանաստեղծի հոգեաշխարհում անհետեւանք անցնել (*հտր. 9*, էջ 380): Շարունակելով աշխարհագրականօրէն ընդլայնել ազդեցութիւնների ոլորտը՝ բացատրում է. «*Դրանցից յետոյ ծանօթացել ու սիրել եմ Բայրոն, Գէօթէ, Շեքսպիր*[17]*: Սրանք, կարծում եմ, անպայման ազդել են իմ գրուածքների վրայ, բայց այնպիսի գրուածքների, որ տակաւին չեն տպուած, [մինչեւ անգամ չեն վերջացած]*» (*հտր. 9*, էջ 345)[18]: Սակայն միաժամանակ լրջագոյնս յորդորում է ու-

---

[17] Եթէ խօսելու լինենք թումանեանական գրական «ուսումնառութեան» մասին, առաջին հերթին պիտի նկատի առնենք Շեքսպիրի հանգամանքը: Միքանի արտայայտութիւններ անգամ բաւարար են հասկանալու այն մեծ ակնածանքը, որ նա ունէր Շեքսպիրի գրականութեան նկատմամբ: Հարցին, թէ՝ «Դու ինչ ես մտածում քո զարգացման մասին», պատասխանում է կարճ ու հատու. «*Ուզում եմ Շեքսպիրը լաւ ուսումնասիրեմ*» (*հտր. 9*, էջ 146): Բացի այս ուղիղ խոստովանութիւնից՝ տասնեակ նամակներում - անգամ կենցաղային բնոյթի - ուղղակի կամ անուղղակի վկայակոչում է հեղինակին կամ նրա գործերից հատուածներ, գնահատութիւններ տալիս անգամ հասուն տարիքում (տե՛ս՝ Ջորջ Ալեքսանդերին գրած նամակը, *հտր. 10*, էջ 238):

Առհասարակ Թումանեանի նամականին բնակեցուած է նաեւ օտար հեղինակների գնահատութիւններով՝ Շեքսպիրից մինչեւ Պուշկին ու Լերմոնտով, մինչեւ վրացի գրողներ՝ Դաւիթ Կլդիաշվիլի, Սիկօ Փաշալիշվիլի, մինչեւ լեհական ոգու «*մեծ կրողներ եւ պատգամախօսներ*» Միցկեւիչ եւ Սենկեւիչ (*հտր. 10*, էջ 259):

[18] Թերեւս հենց սրանով պիտի պայմանաւորել այն հետեւողականութիւնը, որ նա դրսեւորում էր թատերական արուեստի, թատրերգութեան եւ այս ճանապարհով՝ Շանթի դրամաների նկատմամբ, միաժամանակ գորով տածելով արեւմտահայ

շադիր լինել այս նուրբ ու սայթաքուն նիւթի հանդէպ. «*Ես որ ասում եմ ազդուած եմ…, ազդեցութիւնները ես ոչ թէ իմ գործերի, փողերի մէջ եմ նկատում, այլ որովհետեւ զգում եմ իմ հոգու, իմ երեւակայութեան, իմ բարոյական ամբողջութեան վրայ…*» (*հտր. 9*, էջ 345)[19]:

Սրանք համեմատական գրականագիտութեան համար առատ նիւթ տուող վկայութիւններ են՝ արժանի համակողմանի ուսումնասիրութեան:

է) ***Թումանեանը՝ քննադատութեան մասին***: Այստեղ նա մի կողմից զուսպ ու հաւաք լինելու կողմնակից է, միւս կողմից՝ անաչառութիւնը կարգախօս դարձրած արուեստագէտ: «*Քննադատը թարգմանիչ է: Նա պէտք է թարգմանի բանաստեղծին եւ թարգմանի ոչ թէ նրա բառերը, այլ նրա սիրտը: Ասփծու նման սրտագէտ լինի ու խորաթափանց, գտնի ամէն բանի աղբիւրն ու արմատը, որ կարողանայ ճշմարիտ գնալ ու արդար դատել: Այնժամ կը պարզուեն մթութիւնները, հասկանալի ու բնական կ'երեւան ըստ երեւոյթին* (նկատի ունի արտաքինը, խաբուսիկութիւնը – Ք.Ա.) *հակասութիւնները եւ քաոսի մէջ կը յայտնուի ներդաշնակութիւնը՝ եթէ կայ*» (*հտր. 9*, էջ 442-43)՝ յայտարարում է նա, բացարձակ շնորհ ու իրաւունք վերապահելով քննադատին: Բայց իբրեւ երեւոյթի կարեւորութիւնը խորապէս ըմբռնող արուեստագէտ՝ նա նաեւ դնում է միւս կողմի՝ քննադատուողի տաղանդի պահանջը. «*Ամէնից առաջ հարկաւոր է, որ մէկը բանաստեղծ լինի բառի լուրջ իմաստով: Նրանից յետոյ պէտք է նրան հասկանալ: Եւ այս դժուար բան է: Նա ինքն էլ յաճախ իրեն չի հասկանում, կարող է սխալ մեկնութիւն տալ իր այս կամ այն երգին ու երկին, ճիշտ այնպէս, ինչպէս մայրը կարող է գլխի չընկնել, թէ ինչ շնորհք ունի այն որդին, որ ինքն է ծնել*» (*հտր. 9*, էջ 443): Սա արդէն գրական երկի ինքնուրոյն կեանքով ապրելու իրաւունքի, շարունակականութեան դատողութիւնն է, որի շուրջ շատ յաճախ ծաւալւում են ժամանակակից գրականագիտութեան հարցադրումները:

Մեզ համար ուշագրաւ են նաեւ այս կարգի դատողութիւններում ռուս գրականագէտ Վիսարիոն Բելինսկուն կատարուած յղումները, ինչի շնորհիւ է (մասնաւորաբար նկատի ունի «*բանաստեղծի մեծութիւնը կայանում է*

գրողի հանդէպ. «*Երանի թէ մեր Շանթից մի բան դուրս գայ, եւ իր դրամայով չփչացնի դրամատուրգի այն հռչակը, որ մենք առանց դրամայի վաստակել ենք նրան համար: Շատ ուրախացայ, որ նրան այդքան հաւանել էք* (խօսքը Մարիամ Թումանեանի մասին է – Ք.Ա.) *եւ այդքան մօտիկ էք ընդունում*» (*հտր. 9*, էջ 375):

[19] Այստեղ տեղին է վկայաբերել նաեւ բանաստեղծի «Խօսք սկսնակ բանաստեղծներին» յօդուածը, որտեղ նրա ուղղորդումը հանգանակի արժէք ունի. «*Մի՛ շփոթուէք… էն ժամանակ, երբ ազդեցութիւների խօսք են ասում: Համաշխարհային գրականութեան մէջ ոչ մի բանաստեղծ չկայ, որ շատ կամ քիչ ազդուած չլինի իր նախորդներից: Ազդեցութիւնը էն սանդուղքն է, որով սկսնակը բարձրանում է դէպի ինքնուրոյնութիւնը*» (Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ (Քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1913-1922)*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1995, էջ 302):

նրա ժողովրդեան լինելու մէջ (“народность”») հաստատումը (*հտր. 9*, էջ 448) բանաստեղծը լուծում իր կերպարի խնդիրը[20]:

Առանձին դրուագներում Թումանեանը նաեւ բերում է անձերի, մասնաւորաբար հայ քննադատներին, որոնցից ամէնից յաճախ հեղինակի տեսադաշտում յայտնւում է Լէօն. ահա մի դատողութիւն 1904ի Յուլիսին Մարիամ Թումանեանին ուղուած նամակից. «*Կարդացի Լէոյի յօդուածը «Ոստիկի» մասին եւ Ձեր, չգիտեմ ընչի ասեմ, վէպիկի, պատկերի, մի խօսքով Ձեր գրածի: Առ հասարակ բոլոր քնքոյշներդ շատ բախտաւոր պրծաք Լէոյի ճանկից. մարդը գովում է կարգին եւ, մինչեւ անգամ, հրաւիրում է միասին աշխատելու*» (*հտր. 9*, էջ 434) կամ «*Երեւակայիր, որ Լէօն մի շատ միամիտ ու բնաւորութեամբ էլ մի խեղճ մարդ է: Շատ շատերից աւելի լաւ ընկեր, իսկ ինչ վերաբերում է զանազան հայեացքների - էդ առանձին: Շատ բաների մասին էլ, եւ մանաւանդ, մեր «Վերնատան» մասին, նա ուրիշ կարծիք ունի այժմ: Բայց էդ երկրորդական բան է*» (*հտր. 10*, էջ 41):

ը) ***Թումանեանը թարգմանութիւնների մասին***: Այս դիտարկումները բացւում են միքանի կողմերով, որոնցից առաջինը վերաբերում է ինքնուրոյն գրականութեան եւ թարգմանութեան յարաբերակցութեանը: Գրողի պահանջը ելնում է ինքնուրոյն գրականութեան հանդէպ յարգանքի գործօնից. Խօսելով վարձատրութեան եղանակի մասին՝ Թումանեանը գրում է. «*Թարգմանութեանը տալիս են 20-25, ինքնուրոյնին 25-30. զանազանութիւնը 5 ռ. են գտել: Ամէն մարդ ձեռնհաս լինելով՝ թարգմանութիւն է անում եւ փող սպանում, եւ հեղինակը, որ կարող էր ինքնուրոյն բան գրել մտածում է՝ մի վէպ գրելու համար պէտք է նստեմ ամիսներով չարչարուեմ, որ սպանամ, ենթադրենք, 100 ռուբլի, աւելի լաւ չի լինիլ՝ մի շաբաթ նստեմ, մի բան թարգմանեմ՝ աւելի շատ կը սպանամ: Այսպիսով փուժում է ինքնուրոյն գրականութիւնը...*» (*հտր. 9*, էջ 132):

---

[20] Այդ կերպարը առաւել ցայտուն երեւում է բանտում եղած ժամանակահատուածում. այստեղ էլ նա չի մոռանում իր բուն առաքելութիւնը՝ ցանկացած պարագայում մնալ «բարձրում»: Պատահական չենք համարում, որ այդ բոլոր գրութիւններում նա շեշտում է իր «բանաստեղծ» լինելու հանգամանքը եւ այդ հանգամանքից բխեցնում իր գործողութիւնները. «*Դուք* (Թիֆլիսի ոստիկանական վարչութեան ռոտմիստր Եւգենի Պրիգարան – Ք.Ա.) *ենթադրում էք, որ ես կարող եմ այդ ճանապարհին յեղափոխականների նման զէնք օգտագործել: Իսկ ինչպէ՞ս կարող էր պատահել, որ ես չօգտուէի մի այլ զէնքից, իմ բանաստեղծական տաղանդից եւ իմ գրչից, որոնք, Դուք էլ կը համաձայնէք, աւելի զօրեղ են ամէն մի ատրճանակից...*» (*հտր. 10*, էջ 483), մի բան, որ ապացուցել էր տարիներ առաջ գրուած *Թմկաբերդի առումը* պոէմի նախերգանքում՝ «*Խօսքըս, տեսէք, ո՞ւր է գնում / Քաջ որսկանի գիւլլի պէս*» (Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր չորրորդ (պոէմներ)*, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, 2020, էջ 48):

Թումանեանը բարձր նշաձող էր սահմանում թարգմանութեան նկատմամբ: Վարդազարեանին ուղղած 1895ի Օգոստոսի 21ի նամակում գրում է. «*Եւ եմ ուղարկում «Դեւը». այդ թարգմանիչը ոչ թէ բանաստեղծ չի, ինչպէս երեւում է բանաստեղծի էլ ծանօթ չի*» (*հտր. 9*, էջ 158): Այսինքն՝ թարգմանչից պահանջւում է նաեւ բանաստեղծական ներքին տեսողութիւն, մի բան, որ ինքը լաւագոյնս է իրացրել եւ կարեւոր հանգամանք է թումանեանական թարգմանութիւնների երեւոյթը հասկանալու համար: Բնորոշ է այս առիթով նրա մէկ բացատրականը. «*Անցեալ օրը տեղում (առաւօտը) թարգմանեցի Кольцов-ի մի ոտանաւորը - «Сяду я за стол»* (բառացի՝ «Նստել եմ սեղան» - Ք.Ա.)[21] *- ուղարկեցի «Տարազին»: Стол-ը շինել եմ գիտես ինչ - պատի տակ, եւ այս ոչ թէ յանգի համար, այլ աւելի լուրջ խորհրդով: Եթէ սեղան թարգմանէի - նստել եմ սեղան - այդ հայերէն կը նշանակէր նստել եմ սուփրա: Եթէ գրէի սեղանի մօտ - տգեղ էր: Վերջապէս, բանաստեղծութիւնը հայերէն չէր լինի: Խեղճ հայ մարդու տարակուսանքի ու մտածմունքի տեղը - պատի տակն է*» (*հտր. 9*, էջ 235)[22]: Հենց սա է բանալին, որ Թումանեանի ընթերցողը երբեմն նրա թարգմանութիւնները դժուարութեամբ է տարբերակում ինքնուրոյն գործերից:

Իբրեւ մտաւորական՝ նա իր պարտքն է համարում կասեցնել անորակ թարգմանութիւնների շրջանառումը. «*...Ձեզ ամենայն անկեղծութեամբ ասում եմ, որ Ձեր լեզուն վատ է, կարգին հայերէն չգիտէք: Էդ հայերէնով չի կարելի գեղարուեստական գործեր թարգմանել* (խօսքը Տուրգենեւի *Ռուդին* վէպի մասին է - Ք.Ա.): *...Ի հա՛րկէ, էս տեսակ լեզուով տպած շատ գրքեր ունենք ու դեռ էլի կ'ունենանք, բայց էդպէս չի կարելի*»՝ շիտակ գրում է Սաթենիկ Արտեմեանին ուղղած 1911ի Սեպտեմբերի 17 թուակիր նամակում (*հտր. 10*, էջ 125):

թ) ***Ազգայինի ու համամարդկայինի խաչմերուկներում***: Կարելի է անվերապահօրէն պնդել, որ Թումանեանը լաւագոյնս էր գիտակցում այս երկու չափումներին բաւարարելու նախապայմանը: Համամարդկայինի մէջ առաջին հերթին տեսնում էր փիլիսոփայական խոհը: Արդէն ստեղծագործական երկրորդ շրջանում (1900ականներ) բանաստեղծը աւելի է հակւում դրան. «*Ես էլ հետզհետէ փիլիսոփայութիւնն եմ սիրում եւ բանաստեղծութեան մէջ էլ այն, որ ոչ արտասուք ունի, ոչ յուզմունք, այլ մի վեհափառ խաղաղութիւն*[23]*, մի ոլիմպիական, վսեմ, արհամարհոտ թռիչք դէպի լաւագոյն*

---

[21] Խօսքը վերաբերում է «Գեղջուկի մտորմունքներից» («Նըստել եմ շըւար» սկսուածքով) բանաստեղծութեան մասին է, որ լոյս է տեսել՝ *Տարազի*, 19 Նոյեմբեր 1895ի համարի մասին է, էջ 66: Տպագրուած տարբերակում, սակայն, բացակայում է նշուած «պատի տակ» կապակցութիւնը:

[22] Բանաստեղծութիւնը բերում է արդէն Վարդազարեանին ուղղած 1900ի Հոկտեմբերի կէսերին գրած նամակում (*հտր. 9*, էջ 239-40):

[23] Առհասարակ պիտի նկատել, որ «խաղաղութիւն»ը փիլիսոփայական հասկացութիւն է, Թումանեան հեղինակի կերպարի ու բանաստեղծութեան ընկալման բա-

աշխարհները եւ աւելի ջինջ ու մաքուր մթնոլորտները» (*հտր. 9*, էջ 289): Սա, կարելի է ասել, բանաստեղծի բաղձանքն է՝ «*ընթրիքի նստել օտարների հետ*», բայց այդ «*լաւագոյն աշխարհներից*» նա, իբրեւ հա՛յ բանաստեղծ, պարտաւոր է վերադարձ կատարել, ինչը նրան նորից նետում է երկուութիւնների գիրկը. «*Զարմանք. Հայնէն ասում է՝ բանաստեղծի սիրտը աշխարհի կենտրոնն է: Վա՜յ մեր աշխարհի բանաստեղծին ու նրա սրտին, եւ, յիրաւի, իմ սրտի վրայ չափազանց սաստիկ ծանրանում են մեր աշխարքի ամէն ցաւերը, գուցէ այդ արդէն ապացոյց է, որ ես էլ եմ բանաստեղծ, …ես առանց երգելու յոգնած եմ այդ ցաւերից ու սիրում եմ բոլորովին ուրիշ ցաւեր, աւելի անուշ, աւելի աստուածային, երջանիկ ցաւեր*» (*հտր. 9*, էջ 289-90):

Սրանք այն մտահոգութիւններն են, որոնք մէկուկէս տասնամեակ անց, ժողովրդի համար ճակատագրական օրերին պիտի բանաստեղծական մարմնաւորում ստանային «Հայրենիքիս հետ» բանաստեղծութեան սկզբնատողերում.

Վաղուց թէեւ իմ հայեացքը անյայտին է ու հեռւում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարօտով ամէն անգամ երբ դառնում եմ դէպի քեզ՝
Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկէզ[24]:

Եւ ապա կեանքի վերջին տարիներին գրուած քառեակներում վերածուէին բանաստեղծի՝ աստուածայինի հետ նոյնացման խորհրդին.

Առատ, անհատ՝ Աստծու նըման՝ միշտ տեղալուց յոգնել եմ ես…[25]:

Կամ՝

Տիեզերքում աստուածային մի ճամբորդ է իմ հոգին[26]:

ժ) ***Ոճական եւ*** կառուցողական ***յատկանիշեր***: Դրանց մէջ մասնաւորւում է յատկապէս երգիծանքը, որը ոչ-երկրորդական դերակատարութիւն ունի Թումանեանի նամակագրութեան մէջ: Գրականագէտ Ջրբաշեանը, որը մի ամբողջ ուսումնասիրութիւն է նուիրել Թումանեանի ստեղծագործութեան մէջ երգիծանքի բնագծերին՝ իրաւացիօրէն զգուշացնում է երգիծաբանութեան եւ երգիծական տարրի առկայութեան տարբերակման մասին, երեւոյթը տարածելով գրողի ստեղծագործութեան գրեթէ բոլոր ժանրերի, այդ

նալի բառերից մէկը: Եւ սա աւելի է շեշտւում 1910ականներից. «*Ես էլ թէեւ կեանքին ու աշխարհքին շատ փիլիսոփայաբար եմ վերաբերւում եւ մի հաստատուած խաղաղ վերաբերմունք ունեմ դէպի մահն էլ, բայց, այսուամենայնիւ, էս ամէնը վրէս շատ են ազդել*» (*հտր. 10*, էջ 290): Չմոռանանք, որ սա 1916 թուականն է եւ անմիջապէս մեզ բերում է քառեակների խորհրդին:

[24] Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր առաջին*, էջ 288:

[25] Նոյն, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր երկրորդ*, էջ 49:

[26] Նոյն, էջ 63:

թում՝ նամակների վրայ. «*Հումորն ու երգիծանքի միւս երանգները լայնորէն տեղ են գտել նաեւ Թումանեանի նամակների մէջ, եւ դա, ի դէպ, նրանց ընթերցանութեան ընթացքում մեր ստացած իսկական գեղագիտական բաւականութեան հիմքերից մէկն է*»[27]: Նկատենք, որ նմանօրինակ ոճաւորումը բնորոշ է ոչ միայն կենցաղային բնոյթի, այլեւ գրական հարցադրումներով առանձնացող նամակներին եւ տարածւում է նամակագրութեան ամբողջ ընթացքի վրայ: Դեռ ստեղծագործական արշալոյսին յայտարարում էր. «*Այսուամենայնիւ այն էլ գիտես* (խօսքը Ա. Աբովեանի մասին է - Ք.Ա.), *որ ես ինձանից խելօքների հետ եմ ընկնում. ասած ա է, թէ քոսոտ էծը պարզ աղբրի ակնիցը կը խմի: Վերջապէս սրանք ինձ ասում են, հաւատացնում են, որ ես շատ բանջարեղ (հանճարեղ) բանաստեղծ եմ. մի քանի ուրիշ մարդկանց հաւատացրել են, բայց ես չեմ հաւատում: Դուն էլ չէիր պակաս ծգել նամակումդ*» (*հտր. 9*, էջ 16), «*...սրա-նրա մօտ այնքան է գովել* (Աղայեանը - Ք.Ա.), *որ խալխը հենց գիտեն՝ Բայրոնի ազգականն եմ*» (*հտր. 9*, էջ 26) կամ «*Մեր վարդապետացու Եղիշէն եւս այստեղ է. նա ու տէր Մուշեղը (որ այժմ անդամ է կոնսիստորում* (խօսքը Թիֆլիսի հայոց ժողովատեղիի մասին է - Ք.Ա.) *ինձ առաջ* ***մալենկի*** (փոքր - Ք.Ա.) *պոէտ էին անուանում, հիմա* ***վելիկի*** (մեծ - Ք.Ա.) *ձեռնադրեցին*» (*հտր. 9*, էջ 45), «մի խօսքով, շուտով տարածուեց, որ ես ազգային մի ջոջ եմ» (*հտր. 9*, էջ 250): Մանաւանդ վերջինը յատկանշական է նրանով, որ յղում է կատարում Յակոբ Պարոնեանին: Կարեւոր մի հանգամանք եւս. հեղինակի երգիծանքը նախ եւ առաջ իրեն է վերաբերում, ապա նաեւ իր ճանապարհով շուրջիններին. տիպիկ օրինակը մեզ տալիս են Աղայեանին 1893ի Նոյեմբեր 18ին եւ 1894ի Յունուար 27ին ուղղած նամակները եւ դրանցում արտացոլուած բնութագրումները: «*Գրել էք, թէ կուսակցութեան կարօտը քաշում էք եւ տխուր էք: Տխրում ենք Ձեր տխրութեան համար, իսկ ինչ վերաբերում է կարօտին, կարող եմ հաւատացնել, որ կուսակցութիւնը չի մոռանում իւր սիրելի Քէօրօղլուն. յիշում է ամէն խնճոյքում, մանաւանդ, երբ տողերիս գրողն է վեր անում իւր գազարակերի ձայնը եւ յանդգնում է Քէօրօղլու երգը երգել...*» (*հտր. 9*, էջ 122):

Նամակները երգիծական տարրերից զատ բացատրական նիւթ են տալիս երգիծանքի այնպիսի մի տեսակի մասին, ինչպիսին պարոդիան է, յարերգութիւնը: Յատկապէս Վարդազարեանին ուղղած[28] մի շարք նամակներում նկատում ենք, որ երեւոյթը ստանում է գրական բանավէճի խորք. «*Այժմ խօսենք քո բանաստեղծութիւններից: Ինձ շատ դուր է գալիս, որ այդպիսի նամակներ եմ ստանում քեզանից: Քո այդ մտմտուքներից ու խոհերից, որոնք լաւն են կամ նիւթ են դառնալու ինձ համար, կամ դրդելու են մի*

---

[27] «*Թումանեան. ուսումնասիրութիւններ եւ հրապարակումներ», հտր. 5*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1998, էջ 22:

[28] Տե՛ս՝ 1900ի Օգոստոս թուագրուած նամակները (*հտր. 9*, էջեր 226-27 եւ 323):

ուրիշ բանի: Գլխաւորապէս քեզ պատասխանելու եւ քեզ համար: Ահա, օրինակ, քո «Կուռքի» հեգեւանքը, նրա ներհակը սիրեցի ես էլ, որ այս է: Իսկական էլ կը գրեմ երեւի եւ մի շարք այդպիսի բաներ կը թխեմ, առայժմ այս» (*հտր. 9*, էջ 232): Նկատենք, որ «պարոդիա» հասկացութեան դիմաց հեղինակն օգտագործում է «ներհակ» ձեւակերպումը: Իհա՛րկէ, մէկ տասնամեակ անց արդէն, 1910ին, ասուածի լաւագոյն օրինակը տալիս է Յովհաննէս Յովհաննիսեանի «Իմ հայրենիքը տեսել ես, ասա՛» բանաստեղծութեան առթիւ գրուած "Parodia"ն:

Ոճական յատկանիշերի մէջ կարող ենք առանձնացնել եւս մէկ էական գիծ՝ գեղարուեստականութիւնը, ինչի առկայութիւնը նրա նամակների մի մասին հաղորդում է փորձագրութեան բնոյթ (Վարիա Խանդամիրեանին, Մարիամ Թումանեանին եւ այլոց ուղղուած գրութիւնները): Լաւագոյն օրինակներից մէկը հայրենի բնաշխարհի մասին գրեթէ բանաստեղծական տողերն են Խանդամիրեանին Ս. Էջմիածնից ուղղուած 1904 Մայիս 4 թուակիր նամակում, ուր նկատում է՝ «*Արշալոյսին երեւացին Անիի աւերակները, ապա թէ ծաւալուեց Արարատեան դաշտը, մի կողմում՝ սրբազան Մասիսը՝ վեհափառ համարձակութեամբ մտած երկնքի ծոցը, միւս կողմը՝ չքնաղ Արագածը՝ իր լայն փէշերը փռած ու բազմած լէն ու բոլ:*

Բիբլիական, խորհրդաւոր ու համարձակ են Արարատեան աշխարհի գեղեցկութիւնները» (*հտր. 9*, էջ 42): Պատկերն առաւել ամբողջական են դարձնում նոյն հատուածում Աբովեանով եւ Ալիշանով ամբողջացող հայոց գրական աւանդոյթի վկայակոչումները:

ժա) ***Թումանեանը եւ իր «Վերնատուն»ը*:** «Վերնատան» արժէքը ոչ միայն բուն գործունէութեան շրջանի մէջ է, այլեւ բերած օրինակի: Պատահական չէ այն տեւական խանդաղատանքն ու կարօտը, որ տածել են հայ գրողները այդ ընկերութեան նկատմամբ նրա դադարելուց յետոյ: Սա վերաբերում է նաեւ ի՛ր իսկ բառերով գրչի հանդէպ այն պատկառանքին, որ առթել է կառոյցը: «*Առանց «Վերնատան», ի հա՛րկէ, ապրել չի լինիլ*»՝ խոստովանում է Իսահակեանին ուղղած նամակում, միաժամանակ գնահատելով այն կազմող մտաւորականների համախմբումի անհրաժեշտութիւնը. «*Երբոր դու կը գաս, Նիկոլն* (Աղբալեան - Ք.Ա.) *էլ այստեղ է, Դերենիկն* (Դեմիրճեան - Ք.Ա.) *էլ կը գայ - կը սկսենք*» (*հտր. 9*, էջ 282): Մի ուրիշ տեղ նորից իր գորովանքն է արտայայտում. «*Թիֆլիսն եմ ուզում, բայց այնպէս, որ շոգ չլինի, ես էլ սարքուած, տեղաւորուած լինէի, «Վերնատունս» կարգն ընկած ու մի գրական եռանդուն կեանք, նոր տենչերով, նոր շնչերով*» (*հտր. 9*, էջ 296): «Վերնատան» դադարեցումից դեռ տասնամեակներ անց էլ, 1921ին, նա շարունակում էր փայփայել նրա վերաբացման յոյսը. Իսահակեանին Վենետիկ հասցէագրած մէկ այլ նամակում հրաւէր էր կարդում բանաստեղծին եւ յոյս յայտնում, որ «*Թերեւս այժմ կազմենք մեր «Վերնատունը» մեր երկրում ու վերջին օրներս միասին անցկացնենք*» (*հտր. 10*, էջ 396):

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

1916ին, ժողովրդի պատմութեան ծանրագոյն հանգրուանին, Թումանեանը յայտարարում էր, որ ինքը «*հանդիսաւոր երդում է արել... երբեք յոբելեան չպօնել*»: Թումանեանը նմանօրինակ հանդիսութիւնները պարզապէս «ղալմաղալ» էր անուանում (*հտր. 10*, էջ 247): Բայց միքանի տարի անց, Հայաստանի առաջին Հանրապետութեան ծնունդով խանդավառ բանաստեղծը խորը յուզավառութիւն էր ապրում իր յիսնամեակի առթիւ Հայաստանի առաջին Հանրապետութեան կառավարութեան հեռագրին ի պատասխան Ալեքսանդր Խատիսեանին ուղղած նամակում. «*Հայրենի երկրի անդրանիկ կառավարութեան անդրանիկ գրական ողջոյնն ու բարեմաղթութիւնները յուզեցին ինձ մինչեւ արտասուք*» (*հտր. 10*, էջ 659-60): Նկատենք, որ «ղալմաղալները» գուցէ բանաստեղծին շատ բան չեն տալիս. նա մնում է իր այնքան նուիրական «բարձրում», որի գիտակցման ամփոփումն է նրա վերջին նամակներից մէկի նկատառումը. «*Եւ մեծ հաճոյքով նկատեցի, որ իմ վերջին շրջանի փիլիսոփայական տրամադրութիւնը թեթեւ ու անցողակի մի երեւոյթ չի: Մահի հետ էլ եմ հաշտուել: ...Համոզուած եմ, որ եթէ մի հրաշք չպատահի, արդէն մօտիկ է խորհրդաւոր ժամը, եւ ամենայն հանգստութեամբ անցեալ օրերը բոլոր, կիսատ-պռատ ձեռագիրներս ոչնչացրի, մտածելով, թէ վերջացնելու ժամանակ չեմ ունենալու, էսպէս էլ չեմ ուզում մնան: Վերջապէս մեր կեանքը հո սրանով չի վերջանում*» (*հտր. 10*, էջ 427-28, Մեսրոպ եպս. Տէրմովսիսեանին, 22 Օգոստոս 1922): Սա հեղինակի մի քիչ թախծալի հրաժեշտն է, բայց սթափ ու խորագնայ ինքնադիտարկումով. սա մի դէպքում կեանքի վրայ փիլիսոփայական, վերերկրային բարձունքից հայող հոգու խոստովանութիւն է, միւս կողմից՝ սեփական գործի անմահութեան, անժամանցելիութեան գիտակցում:

AN ESSAY ON LITERARY AND THEORETICAL INTERPRETATION (BASED ON HOVHANNES TOUMANIAN'S LETTERS)

(Summary)

KNARIK ABRAHAMYAN (spyurkka@gmail.com)

Hovhannes Toumanian's letters cover diverse aspects of literary arts and criticism, form vs. content, characters, linguistic tricks, his views on different authors, his approaches and understanding of different genres of literature, the messages he conveys, etc. This paper, however, highlights the literary and theoretical perceptions of Toumanian as they are elaborated in his letters and puts them in a framework. In certain cases, the views are underpinned by extracts from articles Toumanian wrote and published in a number of newspapers of the time. Interestingly, Toumanian expressed some of his views on literature while commenting on his works as well as the works of a number of Armenian authors. In several cases while remarking on the influences a particular Armenian author had from Shakespeare, Goethe, Pushkin, Lermontov, etc., Toumanian also mentions the way he was influenced by them.